ՎԼԱԴԻՄԻՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ
(ծննդյան 60 ամյակի առթիվ)

Լրացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հայ ժողովրդի նոր շրջանի և մասնավորապես հայ-ռուս հարաբերությունների ու հայկական գաղթավայրերի պատմության նշանավոր մասնագետ Վլադիմիր Բախշիի Բարխուդարյանի ծննդյան վաթսուն տարին:

Վ. Բարխուդարյանը ծնվել է 1927 թ. Վրացական ՍՍՀ Մառնեուլի շրջանի Ախիյորփի գյուղում, որ և ստացել է միջնակարգ կրթությունը: 1945 թ. Վ. Բարխուդարյանը ընդունվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, որն ավարտում է 1950 թ.: 1950—1954 թթ. նա շարունակում է իր ուսումնառությունը ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրայում՝ մասնագիտանալով հայ ժողովրդի միջնադարյան պատմության հարցերի գծով և 1954 թ. հաջողությամբ պաշտպանում թեկնածուական դիսերտացիա՝ «Ֆեոդալական հողատիրությունը Հայաստանում IX—XI դարերում» թեմայով: 1955 թ. Վ. Բարխուդարյանը աշխատանքի է անցնում պատմության բանգարանում, 1958 թ. փոխադրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտ, որտեղ հաջորդաբար գրաղեցնում է գիտական քարտուղարի, ավագ գիտաշխատողի, իսկ 1967 թ. առայսօր՝ ինստիտուտի դիրեկտորի գիտական գծով տեղակալի պաշտոնը: Միաժամանակ Վ. Բարխուդարյանը 1980 թ. համատեղության կարգով աշխատում է որպես հայկական գաղթավայրերի պատմության բաժնի վարիչ:

Գաղթավայրերի և հատկապես հայ ժողովրդի նոր և նորագույն շրջանի, ռուսահայ գաղթավայրերի պատմությունը եղել է Վ. Բարխուդարյանի երեք տասնամյակի գիտական շահագրգռությունների հիմնական թեման: Նրա «Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմությունը» (Երևան, 1967, 1985 թթ.) երկհատոր ուսումնասիրությունը լուրջ ներդրում է սովետահայ պատմագիտության մեջ: Աղբյուրագիտական հարուստ և կայուն հիմքի, գերազանցապես Սովետական Միության տարբեր քաղաքների (Լենինգրադ, Մոսկվա, Ռոստով, Օդեսա, Երևան) արխիվների նյութերի հիման վրա, որոնց մեծ մասը առաջին անգամ է դրվել շրջանառության մեջ, նա ստեղծել է գիտականորեն բարձրարժեք մի աշխատություն, որը կարող է օրինակ ծառայել ռուսահայ գաղթավայրերի ուսումնասիրության համար ընդհանրապես: Հեղինակը հայկական գաղութի ամբողջական պատմությունը իրավացիորեն ներկայացրել է Ռուսաստանի և հայ իրականության 18—20-րդ դդ. պատմության, հատկապես հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքին ոլխավոր իրադարձությունների փոխառնչությունների ոլորտում: Տնտեսության տարբեր ճյուղերում Դոնի հայության գործունեության մանրազնին հետազոտման հիման վրա ցույց է տրվել հայկական գաղութի դերը Հարավային Ռուսաստանի տնտեսական կյանքում: Գրքում բացահայտվում են նորությունից զերծ մնացած Նոր Նախիջևանի և ամբողջ երկրամասի ֆեոդալիզմից՝ նոր հասարակարգին՝ կապիտալիզմին անցնելու յուրահատկությունները: Հիմնավոր կերպով լուսաբանվել է Նոր Նախիջևանի կատարած դերը հայ և ռուս ժողովուրդների փոխհանաչման և մերձեցման գործում, այսպես՝ ընդգծվել այն իրողությունը, որ հայկական գաղութը ոչ միայն կամրջել ու փոխադարձաբար ուսումնասիրել է ռուսական և հայկական հասարակական մտքի ու մշակույթի նվաճումները, այլև եղել է հայ մտավոր կյանքի ու մշակույթի զարգացման նշանավոր կենտրոն:

Առաջին հատորը, որն ընդգրկում է գաղութի հիմնադրման (1779 թ.) և նրա հետագա բարգավաճման շուրջ 80-ամյա պատմության հարցերը, սկսվում է ղրիմահայերի գաղթի նկարագրությունից: Հեղինակը ցույց է տալիս, որ XVIII դարի վերջերին ռուսական կառավարությունը, ելնելով իր ռազմաքաղաքական և տնտեսական շահերից, որոշեց երկրի հարավի համարյա անմարդաբնակ տափաստանները բնակեցնել քրիստոնյաներով: Այդ նպատակով նա 1778 թ. կազմակերպեց Ղրիմի թերակղզու հայ և հույն բնակչության արտագաղթ: Ղրիմահայերը հանգրվանեցին Դոն գետի ափին, հիմնեցին Նոր Նախիջևան քաղաքը և Չալթիր, Թոփտի, Մեծ Սալա, Սուլթան Սալա, Նովիտա գյուղերը, 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով նորգաղթողներին մեծ արտոնություններ տվեցին:

Վերլուծելով իրավաքաղաքական ու տնտեսական բարենպաստ պայմանները, Վ. Բարխուդարյանը ցույց է տալիս, որ հողային ընդարձակ տարածություններ ձեռք բերելու շնորհիվ Դոնի հայերը այնքան առաջադիմեցին և տնտեսապես ամրացան, որ նույնիսկ Ռուսաստանի կազմում կիսաինքնուրույն միավոր դառնալու հույսեր փայփայեցին: Այդպիսի պատրանքների համար հիմք էր հանդիսանում Ռուսաստանի քաղաքականությունը հայերի նկատմամբ, մանավանդ, որ օրակարգում դրված էր Անդրկովկասը Ռուսաստանին միացնելու հարցը, ուստի և Դոնի հայերի ու քրիստոնյաների նկատմամբ ռուսական արքունիքի կողմից հովանավորելու դիծ էր տարվում:

Գաղութի վիճակը փոփոխվում է 1861 թ. գյուղացիական ռեֆորմից հետո, որից և սկսվում է երկրորդ հատորի պատմությունը: Չնայած իր սահմանափակ բնույթին, 1861 թ. ռեֆորմը զգալի փոփոխություններ առաջացրեց Ռուսաստանի տնտեսական կյանքում, իսկ 1860—70-ական թվականների բարեփոխումներով փորձ էր արվում ամբողջ երկրում հաստատել միասնական վարչաիրավական կարգ: Անդրադառնալով նոր ստեղծված իրադրությանը, Վ. Բարխուդարյանն արձանագրում է, որ կապիտալիզմի զարգացումը, առանձին մարզերի միջև տնտեսական կապերի սերտացումը, հասարակական կյանքի աշխուժացումը իրենց հետ բերում էին համահարթման ընդհանուր տրամադրություններ: 1860-ական թվականների ընթացքում ասիճանաբար սկսվում են սահմանափակվել գաղութի առանձնաշնորհումները, այդ թվում և հողատարածությունները: 1870 թ. վերացվում է Նոր Նախիջևանի ինքնավարությունը՝ մագիստրատը: Մոտ 60 հազար բնակչություն ունեցող հայկական գաղութը, որից 40 հազարը միայն Նոր Նախիջևանում էր բնակվում, հետևությամբ չէր համաձայնվում իր արտոնությունների սահմանափակման հետ: Սկսվում է երբեմն մի ընդդիմադրություն, չնայած այն համախոսականներից ու բարձրագույն ատյաններին տրվող դիմումներից այն կողմ չէր անցնում: Նորնախիջևանցիները, հատկապես նրա առաջավոր մտավորականությունը, աշխատում է ազգապահպանման նոր կռվաններ որոնել և օրինականության սահմաններում ծավալել ժողովրդանպաստ գործունեություն: Բացվում են նոր կանոնավոր հայալեզու դպրոցներ, հիմնվում բարեգործական հաստատություններ, ակումբ, անկելանոցներ, աղքատախնամ ընկերություններ, եկեղեցական հոգաբարձությունն ընդլայնում է իր իրավունքները: Գաղութը փորձում է փոփոխված իրադրության մեջ պանպանել իր ինքնուրույնությունը, իր հոգևոր-մշակութային անկախությունը և որոշ չափով այդ նրան հաջողվում է: Նոր Նախիջևանում առաջացել էր ուժեղ, եռանդաշատ, ազգային-մշակութային հարցերում նախանձախնդիր մտավորականություն, որի գործունեության շառավիղը տարածվում էր ոչ միայն ռուսահայ գաղութների, այլև Անդրկովկասի հայության վրա:

Բացի իրավական խնդիրներից, մենագրության մեջ զգալի տեղ է հատկացված նաև սոցիալ-տնտեսական հարաբերությունների և գաղութի ներսում դասակարգային պայքարի հարցերի լուսաբանությանը, ցույց է տրվում, որ Դոնի հայությունը միատարր զանգված չէր: Կապիտալիստական հարաբերությունների անկաշկանդ զարգացման շնորհիվ հասարակության տարբեր բևեռներում առաջացան հակամարտ հասարակական ուժեր: Հայտնի էին այն բախումները, որ տակավին 1850-ական թվականներին Միքայել Նալբանդյանի գլխավորությամբ դեմոկրատական հասարակաշերտերը մղում էին գաղութի կղերա-աղայական ռեակցիայի դեմ: Հասարակության հասունացման արտահայտություններից մեկն էլ այն էր, որ նորնախիջևանցիները ակտիվորեն մասնակցեցին Ռուսաստանում 1870-ական թվականներին ծավալված քաղաքական շարժումներին: Հատկապես Հարավային Ռուսաստանում լայն ծավալ ստացած հեղափոխական նարոդնիկական խմբակներին Դոնի հայ երիտասարդությունը մեծ մասնակցություն բերեց: Լայն արձագանք գտավ Նոր Նախիջևանի հայության շրջանում Ռուսաստանյան առաջին բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և քաղաքացիական պատերազմի տարիներին Դոնի հայության աշխատավոր զանգվածները գենքը ձեռքերին մարտնչում էին սովետական կարգերի հաստատման համար:

Վ. Բարխուդարյանը այլ աշխատություններում անդրադարձել է հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման, Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման, XX դարի սկզբին Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումների պատմության հարցերին: Նրա մի շարք աշխատանքներ նվիրված են սովետահայ պատմագիտության ու նրա հետագա զարգացման, ինչպես նաև XVIII դ. վերջին հայկական ազատագրական շարժումների գաղափարախոսության խնդիրներին: Սույն հարցերին վերաբերող կոնկրետ թեմաներով նա զեկուցումներով հանդես է եկել համամիութենական (Դորլովկա 1980 թ., Դնեպրոպետրովսկ 1984 թ., Վորոշիլովգրադ 1985 թ., Լվով 1987 թ.) գիտական կոնֆերանսներում:

Ավելի քան երկու տասնամյակ լինելով պատմության ինստիտուտի դիրեկտորի գիտական աշխատանքների գծով տեղակալը, Վ. Բարխուդարյանը գործուն մասնակցություն է ունեցել հայ ժողովրդի պատմության բազմահատորյակի ստեղծմանը: Նա 4-րդ հատորի խմբագրի տեղակալ և բազմաթիվ հոդվածների հեղինակ լինելուց բացի, ամբողջ ութհատորյակի պատրաստման գործում գիտա-կազմակերպական լուրջ աշխատանք է տարել:

Վ. Բարխուդարյանի գործուն մասնակցությամբ Դոնի Ռոստովում (Նոր Նախիջևան), նախկին ս. Խաչ նշանավոր վանքի շենքում, ստեղծվել է հայ-ռուսական բարեկամության թանգարան:

Վ. Բարխուդարյանի անմիջական ղեկավարությամբ և խմբագրությամբ հրատարակ եկավ ՀՍՍՀ ԳԱ և ՀԺՀ ԳԱ հասարակագետների համատեղ ուժերով ստեղծված «Հայ-հունգարական պատմական և մշակութային կապերի պատմությունից» (Երևան, 1983 թ.) հոդվածների ժողովածուն, որը բարձր գնահատության արժանացավ սովետական և հունգարական մամուլում:

Վ. Բարխուդարյանը ակտիվ մասնակցություն է ունենում հանրապետության պատմագիտական կյանքին: Նա ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի (Մատենադարան), ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության պատմության թանգարանի, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության ու օգտագործման վարչության գիտական խորհուրդների, «Բանբեր Հայաստանի արխիվների» ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ է: Նա գործուն աջակցություն է հանդես բերում երիտասարդ կադրերի պատրաստման ու դաստիարակմանը՝ իրականացնելով ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի, ասպիրանտների, հայցվորների հետ տարվող աշխատանքների ընդհանուր ղեկավարումը:

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Բարխուդարյանն այսօր գտնվում է իր գիտական կյանքի ամենաբեղուն շրջանում և գիտական հասարակայնությունը նրանից նորանոր սպասելիքներ ունի: Ցանկանք Վ. Բարխուդարյանին՝ բարյացակամ, ընդառաջող մարդուն, ազնիվ բաղաքացուն, սկզբունքային և անաչառ գիտնականին, երկար տարիների կյանք և բաջառողջություն:

ԱԶԱՏ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր
ԴԵՐԵՆԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
պատմական գիտությունների թեկնածու